# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1/1

## «23» փետրվարի 2026թ. № ՇՄՆ-COP17-26/01 պայմանագրի «04» հունիսի 2026թ. №1 համաձայնագրի

ք.Երևան «06» «08» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված №ՇՄՆ-COP17-26/01 ծածկագրով պայմանագրի 2026 թվականի հունիսի 4-ին կնքված համաձայնագիր №1-ի՝

1.1.1. կետ 2.6-ի «ա» պարբերության «40 (քառասուն)» բառերը փոխարինել «33.33 (երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական)» բառերով,

1.1.2. կետ 2.6-ի «բ» պարբերության «50 (հիսուն) տոկոսը՝ 1 091 398 875 (մեկ միլիարդ իննսունմեկ միլիոն երեք հարյուր իննսունութ հազար ութ հարյուր յոթանասունհինգ)» բառերը փոխարինել «52.38 (հիսուներկու ամբողջ երեսունութ հարյուրերորդական) տոկոսը՝ 1 372 044 300 (մեկ միլիարդ երեք հարյուր յոթանասուներկու միլիոն քառասունչորս հազար երեք հարյուր)» բառերով,

1.1.3. կետ 2.8-ը խմբագրել նոր շարադրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Համաձայնագրի Հավելված №3-ի «Չնախատեսված ծախսեր» տողով նախատեսված միջոցները կարող են օգտագործվել միայն փաստացի առաջացած ծախսերի ֆինանսավորման նպատակով և այդ մասով կանխավճար չի հատկացվում: Ընդ որում, այդ ծախսերի իրականացման համար Պատվիրատուի նախնական համաձայնեցումը պարտադիր է: Պատվիրատուն սույն կետով նախատեսված համաձայնությունը կամ մերժումը հայտնում է Կատարողին 1 (մեկ) օրվա ընթացքում:»

1.1.4. Հավելված №2-ում՝ «Վճարման ժամանակացույցում», կատարել փոփոխություն՝ «1870969500» և «2182797750» թվերը համապատասխանաբար փոխարինել «2245163400» և «2619357300» թվերով,

1.1.5. Հավելված №3-ում՝ «COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պատրաստվածության ապահովում» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նախահաշիվ» աղյուսակում կատարել՝

ա) լրացում՝ նոր տողով, հետևյալ բովանդակությամբ.

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| « | Ավելացված արժեքի հարկ (20%) | | | | | | | 436,559,550.00 »: |

բ) փոփոխություն՝ «Ընդամենը տեղեր» տողի «2,182,797,750» թիվը փոխարինել «2,619,357,300.00» թվով:

## 2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Շրջակա միջավայրի նախարարություն** | **«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ** |
| ք.Երևան, Կառավարական տուն 3 | ք.Երևան, Նալբանդյան 25 ա, բն. 58 |
| ՖՆ գործառնական վարչություն | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011066439 | ՀՀ 1660030207649200 |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 02893152 |
| Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ | «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն |
| ***Ա.Խաչատրյան*** | ***Հ.Սիմոնյան*** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |